
Ը ՀՆՉՅՈՒՆԻ ԿԱՐԳԱՎՐԵԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՅԱՐԵԼՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ

Սույն հոդվածում քննարկվում է հայերենի **Ծ** (թ կամ schwa) ձայնավորի հնչյունաբանական-հնչույթաբանական կարգավիճակը: Ժամանակակից հայ լեզվաբանական գրականության մեջ ընդհանուր առնամբ գերակշռող դիրքորոշումը, որի համաձայն՝ **Ծ-ն** համարվում է «յուրահատուկ», «ինքնուրույն» **հնչույթ**, ասել է թե՝ հնչույթաբանական միավոր, ունի որոշ խոցելի կողմեր:

Հոդվածի նպատակն է լեզվաբանության տեսության համապատասխան օրենքների ու սկզբունքների, ինչպես նաև համալեզվական ու հայերենին բնորոշ փաստերի վերլուծությանը փորձել հիմնավորել որպես ուսումնասիրության արդյունք առաջադրվող նոր դրույթների վավերականությունը, ինչպես նաև՝ լեզվաբանական հետագա ուսումնասիրությունների համար դրանց կարևորությունը:

Ստորև առաջ են քաշվում հետևյալ հարցերը.

1. Ինչո՞ւ հայերենում **Ծ** ձայնավորը չի կարող հնչույթի կարգավիճակ ունենալ:

2. Որո՞նք են **Ծ-ի** հնչույթաբանական, հնչյունաբանական գործառույթները:

3. Ի՞նչ դեր է կատարում **Ծ-ն** հայերենի վանկատման գործնթացներում, և ինչո՞վ է պայմանավորված նրա կանխատեսելիությունը գետեղման մեխանիզմներում:

Վերոհիշյալ հարցերի քննարկման ընթացքում նկատի է առնվել այն, որ

- հնչույթաբանական համակարգերն, ընդհանուր առնամբ, բավականին բարդ կառուցվածք ունեն,

- հատույթային միջավայրով պայմանավորված՝ հնչյունները զգալիորեն տարբերվում են միմյանցից (հիմնականում հնչյունաբանական պատճառներով),

- հնչյունների բաշխումը լեզվում կամայական չէ, այլ պայմանավորված է որոշակիորեն սահմանված հնչույթաբանական կանոններով,

- հնչույթաբանությունը սահմանակցում և հաճախ հատվում է քերականության այլ բաղադրիչների՝ մասնավորապես ծևաբանության ու շարահյուսության հետ,

- հնչյունային կաղապարները տարբեր կողմերով կարող են արտացոլել վերոհիշյալ բաղադրիչների հետ կապերը:

ԻՆՉՈ՞ւ ԻՎԱՅՐԵԹԵՆՈՒՄ Ը ՃԱՋՆԱՎՈՐԸ ՀԻ ԿԱՐՈՂ ԻՆՉՈՒԵԹԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՆԱԼ

Նախքան այս խնդրին անդրադառնալը փորձենք ընդհանուր գծերով ամփոփել «ինչույթ» հասկացության լեզվաբանական էությունը: Ընդունված է, որ բնական լեզուներում ինչույթը հնչյունի տեսական, վերացական արտահայտությունն է: Հնչույթը տվյալ լեզուն ներկայացնող հնչյունական կազմի միավոր է, որի՝ բառում կամ բառակապակցության մեջ ունեցած դիրքի մասին սովորաբար չի նշվում: Հնչույթը նաև համարվում է մտավոր կառույցներում հնչյունի հնարավոր ամենաչեղոք ձևը, որի միջոցով կարելի է բառեր կամ ձևույթներ տարբերակել: Բառում մեկ հնչույթը մեկ ուրիշով փոխարինելու դեպքում հնարավոր է մեկ այլ բառ/ձևույթ ստանալ կամ էլ՝ իմաստ չարտահայտող կառույց: Լեզվի տեսության համապատասխան սահմանումների համաձայն՝ հնչույթները ոչ թե ֆիզիկական հատույթներն են, այլ՝ դրանց մտավոր վերացարկումը: Հնչույթը կարելի է դիտել որպես հարակից հնչյունների (ենթահնչույթների) ամբողջություն: Վերջիններս տվյալ լեզվով խոսողների համար մտածելու, խոսելու և լսելու (կատեգորիկական առումով նման) միավորներ են ու միմյանցից տարբերվում են հնչյունական տարբեր միջավայրերում հանդես գալու հատկանիշներով: Հնչույթի սահմաննան ու սկզբունքային մոտեցումների առումով լեզվաբանական տարբեր դպրոցներ (բրիտանական դպրոց, ամերիկյան ստրուկտորական դպրոց, Պրագայի դպրոց, Կազմակի դպրոց և այլն) տարբեր շեշտադրումներով են ներկայանում: Դարձ է նշել, սակայն, որ չնայած ելակետային մոտեցումներում տարածայնություններին, գրեթե բոլոր հայտնի ուղղություններն ընդունում ու հնչույթի սահմանման հիմքում դնում են տարբերակիչ հատկանիշների տեսությունը:

Թեև հնչույթի մեկնաբանությունը հայ լեզվաբանների հայտնի աշխատանքներում էապես տարբերվում է ժամանակակից այլ՝ արևանտաեվրոպական ու ամերիկյան գիտնականների ամենից շատ շրջանառվող ու հեղինակավոր համարվող մեկնաբանություններից¹, նրանցում ևս ընդգծվում է հնչույթաբանական վերլուծության մեջ տարբերակիչ հատկանիշների կարևորությունը:

«Հնչույթը տվյալ լեզվի արտահայտության պլանի նվազագույն գծային միավորն է, որը բաղկացած է տարբերակիչ հատկանիշների գումարից և որով կարելի է միմյանցից տարբերել տվյալ լեզվի բառերը կամ բառաձևները»²:

¹ Օրինակ՝ «ժամանակակից հայերենի հնչույթաբանությունը» գրքում (1988) Ա. Խաչատրյանը գրում է. «Հնչույթները բազմադարյան ավանդությամբ, արտահայտության պլանի նվազագույն միավորներն են և գրեթի համարժեքները: Դրանք տպավորված են մարդու գիտակցության մեջ որպես **տառ...**» (էջ 21, ընդգծումը իմն է - Յ. Շ.): Դարձ է ծագում. իսկ հնչ նշ կարելի է ասել փոքր տարիքի երեխաների կամ հնչ-ինչ պատճառներով ոչ գրաճանաչ չափահասների նասին: Նրանք, ինչ է, չե՞ն խոսում, թե՞ բառ ու գառ բառերում **թ-ն գ-ից** չեն տարբերում՝ ենթադրելով, որ տառերը չեն ճանաչում: Չէ՞ որ հնչույթաբանությունը բանավոր, հնչող և մտավոր բառապաշարում գործող խոսքի/լեզվի ուսումնասիրությամբ է զբաղվում ու գրավոր խոսքի, նաևնավորապես տառերի հետ գործ չունի:

² Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, էջ 28:

«Հնչանշանները (հնչական կամ ծայնական նշանները) միմյանցից տարբերող նվազագույն միավորները հնչույթներն են, որոնք, ինչպես ամեն տեսակի այլ միավորներ, իրարից տարբերվում են որոշակի հատկանիշներով»³:

«Տարբերակիչ հատկանիշների անտեսումը հնչույթաբանական նկարագրության ժամանակ, մեր կարծիքով, սխալ է, քանի որ հնչույթի նկարագրությունը այդ դեպքում կլինի թրի, իսկ բովանդակությունը՝ չբացահայտված»⁴:

Ը-ի հնչունային կարգավիճակի քննարկումն արժե, թերևս, սկսել Ա. Խաչատրյանի հետևյալ հարցադրումով. «... խոսքում հաճախ հանդես են գալիս այնպիսի հնչյուններ, որոնք լոկ հնչյունական պայմանների ու անցումների հետևանք են, և որոշել դրանց գործառությունը լեզվում հաճախ մեծ դժվարություն է ներկայացնում: Արդյո՞ք միշտ է հեշտ որոշել, օրինակ, հայերենի ը կամ յ հնչյունների արժեքը խոսքում: Արդյո՞ք դրանք միշտ ինքնուրույն հնչույթներ են և հակադրում են այլ հնչույթներին, թե ոչ»⁵:

Ցավոք, տեսական առումով բացառիկ կարենորության այս հարցերին ոչ հեղինակը և ոչ էլ որևէ այլ հնչույթաբան հետագայում չեն անդրադարձել: Դրա փոխարեն, Ա. Խաչատրյանը փաստեր է թերում հօգուտ Ը-ի միաժամանակ և հնչույթային, և ոչ հնչույթային վարքագծի վերաբերյալ: Նրա կարծիքով, հայերենում Ը ձայնավորը կատարում է երեք գործառույթ:

ա. Ը-ն չեզոք ձայնավոր է, որը հերթագայվում է մյուս ձայնավորներով:

բ. Ը-ն վանկային ձայնավորի դիրք է գրավում CC բաղաձայնական կապակցությունների ներսում (գաղտնավանկային ը):

գ. Ը-ն ինքնուրույն հնչույթ է (հատկապես որոշիչ հորի դեր կատարելիս):

Ա. Խաչատրյանն այն կարծիքին է, որ բնիկ հայախոսները «Ը-ն չեն համարում լիարժեք հնչույթ, այլ նրան վերագրում են հիմնականում վանկարար գործառություն»⁶: Իսկ հնչի հիմնա վրա պետք է ոչ լեզվաբան բնիկ հայախոսները Ը-ին «Վերագրեն» հնչույթի արժեքը: Որոշ լեզվաբանների համար (Վ. Առաքելյան, Յ. Բարսեղյան, Ա. Խաչատրյան և այլք) Ը տառի առկայությունը այբուբենում լուրջ հիմքեր է տալիս հայերենում այն հնչույթ համարելու համար: Սակայն առավել ընդգրկուն, համալեզվական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տառի առկայությունը ամենակի էլ կապ չունի նրա հնչույթ լինել-չլինելու հետ: Ավելին, հնչույթաբանական համատեքստում տառի հիշատակումն ընդհանրապես անտեղի է թվում, երբեմն նույնիսկ՝ ապակողմնորոշիչ: Անգլերենի այբուբենից, օրինակ, Թ տառը բացակայում է, սակայն այս լեզվում Թ-ն բավականին հաճախ հանդիպող հնչյուն է և կարող է նույնիսկ ցուցաբերել իմաստատարբերակիչ հատկություն: Օրինակ՝

(1)	/curd/ [kə:d]	կաթնաշոռ	-	/card/ [ka:d]	բացիկ
	/work/ [wə:k]	աշխատել	-	/walk/ [wɔ:k]	քայլել
	/sheet/ [ʃi:t]	սական	-	/shirt/ [ʃe:t]	շապիկ

³ Գ. Զահոռվյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 57:

⁴ Ա. Խաչատրյան, ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Եր., 1988, էջ 20:

⁵ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, նշվ. աշխ., էջ 26-27:

⁶ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 64:

Հնչույթաբանական գրականության մեջ թե՛ բնիկ անգլիախոս և թե՛ օտարազգի տեսաբանները այնուամենայնիվ «զգուշանում» են թ-ն հնչույթ համարել: Ավանդական մոտեցումներում այն ավելի շուտ դիտվում է որպես սղված ձայնավոր:

Ա. Խաչատրյանը, սակայն, հավատացած է, որ հայերենում բառային մակարդակի զրո/ը հերթագայությունները չեն կարող անտեսվել և փորձում է այդ պնդումը հիմնավորել իր կողմից ներկայացվող հետևյալ «նվազագույն զույգերի» առկայությամբ⁷.

(2) Խորքային ձև Մակերեսային ձև		Խորքային ձև Մակերեսային ձև	
(զրո)	(ը)	(զրո)	(ը)
ա. /տակտ/	[տակտ]	հմմտ.	բ. /տակ-ի/
/աղերս/	[աղերս]	հմմտ.	/աղեր-ս/
/չափս/	[չափս]	հմմտ.	/չափ-ս/
/հոգս/	[հոքս]	հմմտ.	/հոգ-ս/
/սերտ/	[սերտ]	հմմտ.	/սեր-ս/

Միանգամից նկատենք, որ զրո/ը «հերթագայություններն» այստեղ դիտարկվում են մի կողմից՝ առանց հաշվի առնելու օրինակ բերվող ձևույթների կատեգորիական տարրերությունները. (2ա)-ում ներկայացված են պարզ ձևույթներ, մինչդեռ (2բ)-ում գործ ունենք ածանցված ձևույթների հետ, մասնավորապես՝ ձևույթ(ներ)+ ձևույթ՝ ս/դ հոդ (վերլուծության հետևողականության առումով սա տեսականորեն անընդունելի է համարվում): Մյուս կողմից, դեռևս պարզ չէ՝ (2բ)-ում տրված արտահայտությունների կազմում ը-ն լիիրավ, խորքային «հնչո՞ւյթ» է, թե՝ (որ ավելի հավանական է) արտասանական փուլում երկու ձևույթների սահմանագծում վաճառման համալեզվական սկզբունքներով ներմուծվող ձայնավոր հնչում: Անտեսելով վերոհիշյալ փաստերը, և հաշվի առնելով զրո/ը «հերթագայությունների» ու բնիկ հայ բառապաշտում ը տառով գրվող բառարանային միավորների առկայությունը (<ընկեր>, <ընտանիք>, <ընդհանուր> և այլն), Խաչատրյանն, այնուամենայնիվ, հակված է կարծելու, որ ը-ն ունի հատուկ հնչույթի կարգավիճակ⁸: Ընդհանրապես, հայ լեզվաբանական գրականության մեջ ը-ն հնչույթ է համարվում:

Ավանդական գրականության մեջ զրո/ը հերթագայություններից բացի նշվում են նաև այլ «հերթագայություններ»: Օրինակ՝

- (3) ա-ը տ[ա]ներ-տ[ը]ներ, մ[ա]տնել-մ[ը]տնել, հ[ա]րել-հ[ը]րել, բ[ա]նական-բ[ը]նական
- ե-ը ս[ե]րել-ս[ը]րել, բ[ե]րել-բ[ը]րել, գ[ե]րել-գ[ը]րել
- ո-ը կ[ո]տրել- կ[ը]տրել, կ[ո]րել-կ[ը]րել

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 58:

⁸ Հնչույթաբանական վերլուծության ժամանակ ձևույթների սահմանները «տեսանելի» են ցանկացած միջավայրում, հետևաբար դրանց անտեսումը որպես կանոն հանգեցնում է հակասական ու խնդրահարուց արդյունքների:

⁹ Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 69:

ի-ը ս[ի]րել-ս[ը]րել
ու-ը մ[ու]տքեր-մ[ը]տքեր և այլն:

Նույնիսկ առանց հատուկ վերլուծության կարելի է տեսնել, որ «հեր-
թագայվոր» կամ «հակադրական» կոչվող վերոհիշյալ զույգերում -ը-
«հնչույթով» ներկայացվող տարբերակներն ընդամենը **ի, ու, ու** (իսկ լեզ-
վում, ընդհանրապես, նաև **ա, ե**) լրիվ ձայնավորների սղված դեպքեր են
և ոչ թե «հնջնուրույն ը հնչույթ» պարունակող արտահայտություններ¹⁰.

(4) **տում-տըլներ, բուն-բըլնական, սուր-սըլրել, գիր-գըլրել, կիր-
կըլրել, միտք-մըլտքեր,** և այլն¹¹:

Ը-ի մեկ այլ «առանձնահատկություն», որ նրան բաժանում է մյուս
ձայնավորներից և հատկապես կարևորվում է սույն աշխատանքում, այն
է, որ հայերենում **ը-ով** որևէ արմատ կամ ձևույթ չկա և պատճականորեն
երբեւ չի էլ արձանագրվել: Դիմք ընդունելով Ք. Աճառյանի «Հայերեն ար-
մատական բառարանը»¹² և «Նոր բառգիրք հայկագեան լեզուի»¹³ հեղի-
նակավոր աղբյուրները՝ կարելի է պնդել, որ **ը-ով** սկսվող որևէ բառ կամ
ձևույթ հայերենում կամ **ա, ե, ու, ի** ձայնավորների համապատասխա-
նորեն սղված/հնչյունափոխված տարբերակն է (տես 5ա), կամ էլ ա-
ծանցված է **ԸՍՏ** և **ԸՆԴ** նախդիրներից, որոնք իրենց հերթին սերում են
posti → *post* → *st* → *est* և **anti** → *ant* → *and (und)* → *end* արմատական
ձևերից (տես 5բ): Օրինակ՝

(5) **ա. Լեզվաբանական տարբեր (համաժամանակյա/պատմական)
գործնքացների հետևանքով հնչյունափոխված տարբերակներ՝
Վ(ձայնավոր) → Թ(ը)**

ա → ը	ի → ը	ու → ը
անկողին-ընկողին	իղձ-ըղձանք	ուղեղ-ըղեղ
անթանոց-ընթանոց	ինչու-ընչու	ումպ-ըմպան
անդաճել-ընդաճել	ինձ+ուղտ-ընձուղտ	ուղտափուշ-ըղտափուշ
անձխոտ-ընձախոտ	ինչ+ա+սեր-ընչասեր	ունդ/հունտ-ընդաբույս

ե → ը	ո → ը
ենթադրեմ-ընթադրեմ	ողորկ - ըղորկ
ենթակա-ընթակայ	

բ. ԸՍՏ նախդիրից ածանցված ձևեր
ըստ+մասնեայթ→**ըստմասնեայթ**
ըստ+գտանել→**ըստգտանել**
ըստ+անձին→**ըստանձնել**(=ստանձնել)

ԸՆԴ նախդիրից ածանցված ձևեր
ընդ+բռնել→**ընդբռնել**→**ըմբռնել**
ընդ+պահկել→**ընդպահկել**→**ըմբահկել**
ընդ+կեր→**ընդկեր**→**ընկեր**
ընդ+ոստուցեալ→**ընդոստ**→**ըմբռստ**
և այլն:

¹⁰ Դժվար թե հայերենին տիրապետող որևէ մարդ, ասենք՝ **տներ** բառը լսելիս, այն նույնացնի կամ զուգակցի տըն (պարզապես գոյություն չունեցող) ձևի հետ: Փոխարե-
նը նրա մտավոր բառարանում միանգամից «ակտիվանում» է **տուն** (+եր → մեկից ա-
վելի, շատ) ձևություն: Նոյնը կարելի է ասել **բըն** (**բուն**), **կըր** (**կիր**), **սըր** (**սուր**) և մյուս
նման ձևերի/ձևությունների վերաբերյալ:


¹¹ Նկատենք, որ վերոհիշյալները, առանց բացառության, ածանցված/թեքված
բառաձևեր են:

¹² Ք. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 121-134:

¹³ Տես «Նոր բառգիրք հայկագեան լեզուի», հ. 1, Եր., 1979, էջ 760-788:

Օրինակները բազմաթիվ են ու, կարելի է ասել, առանց բացառության վկայում են վերը նշված փաստի, այն է՝ հայերենի խորքային կառույցներուն թիւ հավանական բացակայության մասին:

Ը-ի հնչույթայնությունը որոշելու համար բավական է դիմել ստորև ներկայացվող սխեմատիկ հարաբերությանը, որի օգնությամբ կարելի է որոշել ցանկացած երկու հնչյունների հնչույթային կարգավիճակը¹⁴: Գծապատկերն ընդհանուր առնամբ արտացոլում է ներկայումս հնչույթաբանության տեսության մեջ ընդունված հատույթի հնչույթային արժեքը սահմանող մոտեցումները:



Այսպիսով, հնչյունները համարվում են միևնույն հնչույթի տարրերակներ, եթե դրանք հնչյունաբանական տեսակետից նման են և միևնույն միջավայրում չեն հանդիպում: Ենթադրվում է, որ դրանք գտնվում են լրացական բաշխման մեջ: Այն դեպքերում, եթե խնդրու առարկա հնչյուններն այնուամենայնիվ հանդիպում են հատույթային միևնույն միջավայրում, և մեկը մյուսով փոխարինելու դեպքում ինաստի փոփոխություն տեղի չի ունենում, ապա հատույթներն ակնհայտորեն գտնվում են ազատ փոփոխակային հարաբերության մեջ: Եվ, վերջապես, հնչյունը հնչույթի արժեք ունի, եթե նրա փոխարեն այլ հնչյունի կիրառությամբ ինաստային փոփոխություն է տեղի ունենում¹⁵:

Այսպես, վերը նշված հարաբերությունների տրամաբանությունը թիւ նկատմամբ կիրառելու դեպքում կարելի է ենթադրել, որ

- հայերենում թիւ լրացական բաշխման մեջ չէ որևէ այլ ձայնավորի հետ, քանի որ շատ հաճախ միևնույն հնչյունական միջավայրում (բացառությամբ ուժեղ, շեշտված վանկերի) այն կարող է փոխարինել որևէ այլ ձայնավորի (տես 5ա) և ինաստային որևէ փոփոխություն չառաջացնել,
- հայերենի ձայնավորներից և ոչ մեկը հնչյունաբանական հատկանշներով թիւ հետ չի կարող նմանեցվել, առավել ևս՝ նույնացվել: Յիմն-վելով լաբորատոր մանրակրկիտ փորձերի ու բերանի խոռոչի տեսա-

¹⁴ Տե՛ս Phoneme-allophone-determination-chart.svg

¹⁵ Տե՛ս Trask, R. L. A Dictionary of Phonetics and Phonology, London & New York, Routledge, 2006, էջ 264-265:

պատկերներից (լարինգոսկոպի, ուլտրաձայնային ու ձայնաչափական այլ սարքավորումների օգնությամբ) ստացված տվյալների վրա, հնչութաբանական ուսումնասիրություններում թ-ն (schwa) ընդհանրապես նկարագրվում է որպես «չեզոք ձայնավորական դիրք զբաղեցնող հնչյուն»¹⁶, որի արտաքերությանը արտասանական որևէ ակտիվ օրգան չի մասնակցում. «Լեզուն ու շուրթերը գտնվում են հանգստի վիճակում», և նրա դիրքը «լեզու-արտաքերական համակարգ հարաբերության մեջ», փաստորեն, «տարբերակային միջին դիրք է բոլոր լրիվ ձայնավորների համար»¹⁷: Մյուս ձայնավորների համեմատ թ-ն ունի դիրքային սահմանափակումներ: Նշենք նաև, որ թ-ն հայերենում գրեթե միշտ (բացառությամբ որոշ բարբառների) հանդես է գալիս թույլ, անշեշտ դիրքերում: Բառերում, ծևութերում վերջընթեր թ-ի առկայությունը նույնիսկ փոխում է լեզվի կայուն չափական կաղապարը. շեշտը տեղափոխվում է նախավերջին վանկ,

- հայերենում թ-ի կարգավիճակի վերաբերյալ առավել հիմնավոր վարկածը թերևս այն է (ամփոփելով գծագրում նշվող հարաբերությունները), որ թ հնչյունը մյուս ձայնավորական հատույթների հետ ազատ փոփոխակային հարաբերության մեջ է գտնվում և, այնուամենայնիվ, հայերենի հնչույթային կազմի խորքային հատույթ չեղած է:

Նկատի առնելով այն, որ թ-ին հնչույթի կարգավիճակ վերագրող լեզվաբանները փաստարկում են ժամանակակից բնիկ հայախոսի նտավոր բառապաշարում ընկեր, ընծուղտ, ըմբոստ և այլ բառերի առկայությունը, այս բառերը կազմող թ-ն կարելի է պարզապես ընդունել որպես հնչյունափոխված մակերեսային հատույթ կամ ձայնավոր հնչյուն, բայց ոչ հնչույթ այն պարզ իրողությամբ, որ թ-ն իր հնչյունաբանական-հնչույթաբանական հատկանիշներով ու գործառույթներով չի բավարարում հնչույթաբանական քերականության՝ հնչույթի համար սահմանված անհրաժեշտ նվազագույն պայմանները:

Որո՞նք են Ծ-ի հնչյունաբանական, հնչույթաբանական գործառույթները

Ժամանակակից համալեզվական վերլուծություններում տեսական ու փորձառական առումով արժեքավոր փաստեր են արձանագրվուն թ ձայնավորի հատկանիշների ու որոշակի հնչյունական միջավայրերում նրա վարքագիծի վերաբերյալ: Այն, որ այս՝ schwa կոչվող հնչյունը հնչյունաբանական հատկանիշներից գուրկ և հետևաբար չեզոք ձայնավոր է կամ ամենազգայունն է ձայնավորական ներդաշնակության նկատմամբ, թերևս նորություն չեղած է: Յարկ է նշել, սակայն, որ ներկայումս տեսական առումով կարևորվում է թ-ի հնչյունաբանական ու հնչույթաբանական գործառույթների միջև հստակ տարբերակում մտցնելը: Յամընդհանուր քերականության հնչույթաբանական բաղադրիչները, օրինակ, թ-ին վերագրվում է

¹⁶ M. van Oostendorp, Schwa in phonological theory, *Glot International*: 5, Vol.3, 1998, pp. 3-8.

¹⁷ Gick, B. & Wilson, I. Exrescent schwa and vowel laxing: Cross-linguistic responses to conflicting articulatory targets. In L. Goldstein, D. H. Whalen & C. T. Best (eds.) *Papers in Laboratory Phonology 8: Varieties of Phonological Competence*. Berlin, New York: Mouton de Gruyter, 2006, pp. 635-660.

վաճային/չափական կառուցվածքը (գետեղման միջոցով) «բարելավող» ձայնավորական հենարանի գործառություն:

Զայնավորական հենարանների գետեղումը բաղաձայնական խմբերը կամ որոշակի հնչույթաբանական ու ձևաբանական գործընթացների հետևանքով առաջացած բաղաձայնական կուտակումները տարրալուծելու բավականին տարրածված համալեզվական երևույթ է:

Ընդհանրապես, հնչույթաբանական որևէ հատույթի՝ ձայնավորի կամ բաղաձայնի ներմուծում կամ էպենթեսիս¹⁸ կարող է տեղի ունենալ տարբեր նպատակներով.

› Աերլեզվական հնչույթաբանության մեջ խորքային և մակերեսային ձևերի միջև որոշակի հարաբերություններ ստեղծելու կամ

› միջլեզվական հնչույթաբանական կառույցների միջև անհամապատասխանությունները հարթելու (ինչպես, ասենք՝ այլ լեզուներից փոխառությունների հնչույնական կառույցները մայրենի լեզվի ֆոնոտակտիկական (հնչույթների կապակցելիության), չափական կառուցվածքներին հարմարեցնելու) համար և այլն:

Այսպես, արաբական որոշ բարբառներում, ռուսերենում, հայերենում, բրազիլական պորտուգալերենում, ֆիններենում և ելի մի շարք լեզուներում խորքային բաղաձայնական կուտակումները քերականական տարբեր նպատակներով մակերեսում հանդես են գալիս ձայնավորական հենարաններով.

(7) ա. **ԲԵՐԲԵՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՒՆ**¹⁹

<i>Խորքային ձև</i>	<i>Մակերեսային ձև</i>
/n-bda/	[nəbda] <i>մենք սկսեցինք</i>
/hrwl/	[hərweł] <i>զրոսնել</i>
/t-qwa/	[θeqwa] <i>այս ամուր է</i>

բ. **ՊԱՌԵՍՏԻՆՅԱՆ ԱՐԱԲԵՐԵՒՆ**²⁰

<i>Խորքային ձև</i>	<i>Մակերեսային ձև</i>
/nimr/	[nimř] <i>վագր</i>
/dibs/	[diňs] <i>օշարակ</i>
/ʒild/	[ʒilid] <i>կաշի</i>

գ. **ՌՈՒՍԵՐԵՒՆ**

<i>Խորքային ձև</i>	<i>Մակերեսային ձև</i>
/metr/	[metər] <i>մետր</i>
/korabl/	[korabəl] <i>նավ</i>
/vixr/	[vixər] <i>մրոհի</i>

դ. **ՀԱՅԵՐԵՒՆ**

<i>Խորքային ձև</i>	<i>Մակերեսային ձև</i>
/tsłkel/	[tsəłkel] <i>ծլկել</i>
/mkrtel/	[məkərtel] <i>մկրտել</i>
/anqərdi/	[anqərdi] <i>անջրդի</i>

Ցանկացած լեզու փոխառությունների նկատմամբ ցուցաբերում է որոշակի վերաբերմունք, այն է՝ խնդրու առարկա լեզվական միավորը հարմարեցնել, համապատասխանեցնել փոխառու լեզվի հնչույթաբանական ձևաբանական սկզբունքներին. ստորև ցույց է տրված, թե ինչպես են, օրինակ, դազախները և Այսակայի էսկիմոսները (լեզուն՝ յուպիկերեն) ռուսերենից փոխառությունները հարմարեցնում իրենց մայրենի լեզվի հնչակաղապարներին.

¹⁸ Էպենթեսիս (հիմն հումարենի չունեցող առաջացումը՝ այս պահին առաջանական է կոչվում հնչույթաբանական կառույցում որոշակի (ձայնավորական կամ բաղաձայնական) հատույթի գետեղման գործողությունը):

¹⁹ Stéphane Houch, Y. Phonological and Morphological Issues and Schwa Epenthesis in Berber, R.O.A 696, 2004:

²⁰ Stéphane Gouskova, M. & Hall, N. Levantine Arabic Epenthesis: Phonetics, Phonology and Learning, Variation, Gradience and Frequency in Phonology Workshop, Poster, 2007:

(8) а. **ՂԱԶԱԽԵՐԵՆ²¹**

<i>Фөнсашорпіржюл</i>	<i>Ұмајрեңіхі</i>	<i>тұарретірақ</i>
/smena/	[i̯smen]	һերәвапіхі
/spravka/	[t̪sp̪i̯rafka]	տեղեկամբ
/prava/	[p̪i̯rava]	իրավունքнеб
/stat/	[t̪stat]	նահանգ

բ. **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅՈՒՊԻԿԵՐԵՆ²²**

<i>Фөнсашорпіржюл</i>	<i>Ұмајрեңіхі</i>	<i>тұарретірақ</i>
/knut/	[kənʊ:təq]	մտրակ
/platók/	[plətəoq]	թաշկիմակ
/stekló/	[stikəloq]	ապակի

Ֆարսի լեզվում (գ), ճապոներենում (դ) փոխառություններն ընդունում են հետևյալ ձևերը՝

գ. *Փոխառություն*

	ՖԱՐՍԻ²³
Սպարտա	[esparta]
Շվարց	[ʃowartz]
Պլուտոս	[p̪elutos]
Շնայդեր	[eʃnaɪdər]
Շրի Լանկա	[ʃeri laŋka]

դ. *Փոխառություն*

	ԹԱՊՈՆԵՐԵՆ²⁴
բիզնես	[biʒinesu]
կատարօց	[katarogu]
ինդեքս	[indekusu]
կրիմ	[kurimu]
գազ	[gasu]

Գրականության մեջ հաճախ քննարկվում են հնչյունաբանական տեսակետից «քույլ» (կամ «մակած») թ-ի (excrescent schwa) և «ներխուժող» թ-ի (intrusive schwa) տարրերակները: «Թույլ» թ հայերենում կարող է համարվել շշական/սուլական+պայթական (Ը/Ս+Պ) բաղաձայններից առաջ արտաբերվող, կիսով չափ լսելի թ հնչյունը, օրինակ՝ թտապ, թգույշ, թտահակ, թշպար, թկահակ և նման բառերում (թ/թՍ+Պ): «Ներխուժող» թ-ն, որ կոչվում է նաև «օգնող ձայնավոր», սանսկրիտի սվարաբհակտի (svarabhakti) ձայնավորի համարժեքն է: Սովորաբար թ-ի այս գետեղմանը վերագրվում է հնչույթաբանական կարգավիճակ այն առումով, որ թ-ն «օգնում» է խորքային (հնչույթաբանական) և մակերեսային (հնչյունաբանական) կառույցների միջև որոշակի համապատասխանություն ստեղծելուն: Սակայն նի շարք հնչյունաբաններ, հիմնվելով համապատասխան փորձառական արդյունքների վրա, պնդում են, որ թ-ի ընկալումը հաճախ պայմանավորված է ոչ թե մտածված, նպատակային գետեղումով, այլ՝ պատահական հետևանք է բնախոսական որոշակի գործընթացների: Այսպես, Բ. Գիբն ու Ի. Վիլսոնը կարծում են, որ «Ներխուժող» թ-ն արտաբերական օրգանների միջև ստեղծվող բախումները լուծելուն ուղղված ջանքերի հետևանք է: Օրինակ, անգլերենի որոշ բարբառներում հետևալեզվային հնչյունից առաջնաեզրվայինի անցնելու համար լեզուն բերանի խոռոչում անցնում է որոշակի փուլերով, այդ թվում նաև «թ-ի տարածքով»²⁵: Այսպիսով, որպեսզի արտաբերության առումով բախվող հնչյուն-

²¹ Стіу Сулейманова Б. А. О фонетическом освоении лексики, заимствованной из русского языка. Прогрессивное влияние русского языка на казахский. Алма-Ата, 1965, էջ 60-95:

²² Стіу Hammerich, L. The Russian stratum in Alaskan Eskimo. Slavic Word 3 (Supplement to Word 10), 1954, էջ 401-428:

²³ Стіу Fleischhacker, H. Cluster-dependent epenthesis asymmetries, A. Albright and T. Cho (eds.) UCLA Papers in Phonology: 5, 2002, էջ 71-116:

²⁴ Стіу Ohso, M. A Phonological Study of Some English Loan Words in Japanese. Working Papers in Linguistics, Studies in Phonology and Methodology: 14, OSU, 1973, էջ 1-27:

²⁵ Стіу Gick, B. & Wilson, I. Excessive schwa and vowel laxing: Crosslinguistic responses to conflicting articulatory targets. In C. T. Best (Ed.), Papers in Laboratory Phonology VIII. Cambridge: CUP, 2004:

ներից յուրաքանչյուրը արտասանվի, տեղի է ունենում «**Ծ**-ով արտահայտվող լսելի անցում»: Չի բացառվում, որ Ա. Խաչատրյանը **Ծ** և **Յ** հնչյունների մասին գրելիս, «լոկ հնչյունական պայմանների ու անցումների հետևանք» ասելով նկատի է ունեցել վերը նշված երևույթը:

Ի՞նչ դեր է կատարում Ծ-Ծ հայերենի վանկատման գործընթացներում, և ինչո՞վ է պայմանավորված նրա կանխատեսելիությունը գետեղման մեխանիզմներում

Զայնավորական հենարանի գետեղումը վանկատման հետ առնչվող թերևս ամենաբարդ հնչույթաբանական գործընթացն է հայերենում: Մի կողմից խորքային արտահայտությունները ներկայացնում են հաջորդական բաղաձայնների երկար շարքեր՝ վեց կամ նույնիսկ ավելի կից բաղաձայններով (ներառյալ կրկնավոր և բնածայնական հարադրությունները), ինչպես օրինակ՝ **սայրուել**, **մկրտել**, **ծշգրտել**, **խրիսնջալ**, **ծռմոված**, **քրիմնջալ**, **քրիսկրիսկոց** և այլն, մյուս կողմից՝ հայոց լեզուն խիստ սահմանափակումներ է դնում մակերեսային արտահայտություններում բաղաձայնական կուտակումների վրա: Խորքային և մակերեսային արտահայտությունների միջև կատարյալ համապատասխանություն ստեղծելու նպատակով լեզուն դիմում է ձայնավոր հնչյունի գետեղման մեթոդին: Սա, իհարկե, բնորոշ է ոչ միայն հայերենին, այլև շատ այլ լեզուների:

Հայերենում ներմուծվող ձայնավորական հենարանի դեր է կատարում **Ծ** (schwa) հնչյունը: Բնիկ հայախոս չափահասները և նույնիսկ մանուկները խորքային բաղաձայնական խմբերն արտասանում են, ընդհանուր առմանք, կանխատեսելի և քերականորեն ճիշտ համարվող ձևերով: Այս իրողությունը վկայում է այն մասին, որ մակերեսային արտահայտություններում գաղտնավանկային **Ծ**-ի հայտնվելը ուղղակիորեն կապված է որոշակի հնչույթաբանական գործընթացների հետ, որոնք նախատեսում են այդ հնչյունի գետեղումը՝ համընդհանուր քերականության և հայերենին բնորոշ հնչույթաբանական բաղադրիչ կառույցների համար կազմության ընդունելի պայմաններ ապահովելու նպատակով:

Հայերենի ուղղագրական համակարգը հիմնականում հնչույթային բնույթի է, և **Ծ** տառն այրութենում իր «օրինական» տեղն է զբաղեցնում: Բնիկ բառապաշարում **Ծ** տառով գրվող մի շարք բառեր կան. **Ծնկեր**, **Ծատիր**, **Ծմբիշ**, **Ծնդզգել**, **Ծնծա**, **Ծնկույզ**, **Ծմբռնել** և այլն: Նման բառերում, ավանդական մոտեցման համաձայն, ուղղագրությունն ուղղակիորեն արտացոլում է խորքային արտահայտությունները: Մինչդեռ **Ծ-ն** չի գործածվում բաղաձայնական խմբեր գրելիս: Հարց է ծագում. արդյո՞ք **Ծ-ն** մշտապես առկա է խորքային արտահայտություններում (ինչպես վերը նշված բառերում), և որոշ մասնավոր դեպքերում (ինչպես ասենք՝ բաղաձայնական կապակցություններում) ուղղագրությունը պարզապես թերանում է այն ի ցուց դնել, թե՝ հայերենի հնչույթաբանության մեջ **Ծ-ն** ունի փոփոխական վարքագիծ:

Վանկատման դեպքերի մեջ չափազանց դժվար է հենվել «խորքային թ-ի» գոյության փաստի վրա, եթե փորձենք բացատրել ձայնավորների սղման/թուլացման գործընթացներում թ-ի գետեղման սկզբունքները²⁶:

Սկզբնական և վերջահար բաղաձայնական կուտակումների միջև անհամաշխափությունն առաջացել է շեշտի, ինչպես նաև ձայնավորի սղման կամ անկման պատճական փոխներգործությունից: Վերջահար շեշտի ազդեցությամբ նրան նախորդող ձայնավորները սղվել/թուլացել են՝ բարերի սկզբունք առաջացնելով կից բաղաձայնների երկար շարքեր: Նախ դիտարկենք ստորև բերվող օրինակները:

ա. Ձայնավորն ամբողջովին ընկնում է.

(9) **Խորքային ծև Ածանցում Ձայնավորի անկում Մակերեսային ծև**

/զատիկ/	/զատիկ-ի/	/զատ□կ-ի/	[զատ. կի]
/նածուն/	/նածուն-ի/	/նած□ն-ի/	[նած. նի]
/բերան/	/բերան-ից/	/բեր□ն-ից/	[բեր. նից](բոր. - խակց.)

բ. Թուլացող ձայնավորը փոխարինվում է թ-ով.

(10) **Խորքային ծև Ածանցում Ձայնավորի թուլացում Մակերեսային ծև**

/նիրգ/	/նիրգ - եր/	/ն(ի→ը)րգ - եր/	[նըր . քեր]
/իղձ/	/իղձ - ալ/	/ի(հ→ը)ղձ - ալ/	[ըղ. ծալ]
/նարինջ/	/նարինջ - ի/	/նար(ի→ը)նջ - ի/	[նարըն . ջի]
/սուրճ/	/սուրճ - արան/	/ս(ու→ը)րճ - արան/	[սըր. ճարան]

գ. Թուլացման հետևանքով ձայնավորն ընկնում է, իսկ թ-ն հայտնվում է բոլորովին այլ դիրքում.

(11) **Խորքային ծև Ածանցում Ձայնավորի Ը-ի գետեղում Մակերեսային անկում ծև**

/շիտակ/	/շիտակ-վ-ե՛լ/	/շտուկ-վ-ե՛լ/	շըտկը-վե՛լ	[շըտկըվե՛լ]
/կոճակ/	/կոճակ-վ-ա՛ծ/	/կոճռակ-վ-ա՛ծ/	կոճկը-վա՛ծ	[կոճկըվա՛ծ]
/ստրուկ/	/ստրուկ-ուիկի/	/ստրռակ-ուիկի/	ստըրկ-ուիկի'	[ստըրկուիկի]

Ը-ի գետեղման ընդհանուր կաղապարի խորագին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ամենահայտնի էլ անկանոն կամ անկանխատեսելի բնույթ չի կրում (ինչպես արձանագրված է ավանդական տեսություններում): Տեսական հնչույթաբանության համապատասխան օրենքների ու սկզբունքների կիրառման միջոցով կարելի է պացուցել, որ (9)-ոդ, (10)-ոդ և (11)-ոդ օրինակներում թ-ի վարքագիծը, այնուամենայնիվ, լիովին «կանխատեւլի» է: Վերջինիս դիրքը պայմանավորված է համընդհանուր քերականությամբ:

²⁶ Տե՛ս Թ. Ղարագյուլյան, Հայերենի գաղտնավանկային թ-ի հնչման հիմնական առանձնահատկությունները, «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 1979, № 12, էջ 41-42, B. Vaux, The Phonology of Armenian, Oxford: OUP 1998, էջ 67:

թյան ու հայերենին բնորոշ հնչեղությամ²⁷ և օրինականությամ²⁸ սկզբունքներով կառավարվող կանոնների մի ամփոփ համակարգով:

Դելի և Ելմեղլառուի²⁹ համընդհանուր քերականության բաղադրիչ մաս կազմող վանկատման ալգորիթմի՝ Բ. Վոքսի կողմից մասնակիորեն վերափոխված տարբերակը բավականին հիմնավոր և համոզիչ կերպով բացատրում է հայերենում վանկաբաժանման ընդհանուր օրինաչափությունները, ինչպես նաև ը-ի գտնվելու վայրը: Կարեւոր է հաշվի առնել այն հանգանանքը, որ վանկաբաժանման մեխանիզմը ճշգրիտ գործարկելու մեջ վճռորոշ դեր ունի հատույթի ծևարանական կառուցվածքը: Հնչույթաբանական կանոնների համար ընդհանրապես, իսկ ինչույթաբանական վանկատման դեպքում՝ մասնավորապես, ձևույթների սահմանները «տեսանելի» են ցանկացած միջավայրում: Յետևաբար, ածանցված և բաղադրված ձևույթների համար վանկատման մեխանիզմն իրագործում է ինչույթաբանորեն անհրաժեշտ հատուկ գործողություններ: Լեզվաբանական վերլուծության ժամանակ անհրաժեշտ է և նույնիսկ պարտադիր առաջին հերթին հստակորեն տարբերակել ձևաբանական մակարդակները, ապա՝ ճշգրտորեն նկատի առնել քննարկվող հատույթներում ընդգրկված ձևույթների սահմանները (հմնտ. /սերտ/ [սերտ] և /սեր-դ/ [սերդ]):

Հայերենում ը-ի գետեղման մեխանիզմը հիմնականում քննարկվում է հնչեղության հաջորդականությամ³⁰ սկզբունքի համատեքստում: Այսինքն՝ ը-ի գետեղումը դիտվում է որպես անընդունելի («անօրինական») բաղաձայնական կապակցությունների խնդիրը լուծելու արդյունավետ միջոց: Դատելով որոշակի կապակցությունների հատույթային միջավայրից և վանկաբաժանման որոշ լեզվահատկանշական կանոններից՝ կարելի է ենթադրել, որ ը-ի կիրառման մեխանիզմները հաշվի են առնում ավելին, քան հնչեղության պայմաններն են:

Վերոհիշյալ խնդիրները, սակայն, ինչպես նաև հայերենում վանկատման մեխանիզմի/ալգորիթմի գործարկման սկզբունքները հետագա, առավել ընդգրկուն վերլուծության նյութ են:

АСМИК ОГАНЕСЯН – Статус звука шва **Ը** в современном армянском языке. – Армянская орфографическая система в основном фонемического характера – с „законной” графемой шва (Ը) в своем составе. Согласно традиционным исследованиям, ряд слов в лексиконе, как например Թուներ ‘друг’, Թուր ‘превосходный’, Թուրնել ‘понять’ и т. п., пишется именно с этой буквы, и, следовательно, шва принадлежит к

²⁷ Հնչեղության սկզբունք (Sonority Principle). հնչույթների համընդհանուր դասակարգումը կատարվում է համաձայն նրանցում առկա հնչեղության աստիճանի:

²⁸ Օրինականության սկզբունքը (Legality Principle) հիմնվում է տվյալ լեզվում հնչույթների կապակցելիության (Փոնոտակտիկական) սկզբունքների ու ընդհանրացումների վրա: Վերջիններս հնարավորություն են տալիս որոշելու լեզվում այս կամ այն հատույթի/հատույթների կապակցելիության օրինականությունը:

²⁹ Ste'v F. Dell & M. Elmedlaoui, Syllabic consonants and syllabification in Imdlawn Tashlihyt Berber, Journal of African Languages and Linguistics: 7, 1985, էջ 105–130:

³⁰ Հնչեղության հաջորդականության սկզբունք (Sonority Sequencing Principle). վանկերում հատույթների հնչեղության հատկությունն է, որը ենթադրում է հնչեղության աճ մինչև վանկի գագաթը, այնուհետև՝ անկում:

фонологическим формам. Однако, буква шва не пишется между двумя согласными. Возникает вопрос: присутствует ли шва в основных фонологических формах (как в вышеупомянутых словах), учитывается ли орфографическими правилами (как в случае консонантных групп) или же имеет переменное поведение? В имеющихся лингвистических теориях шва считается “специальной” фонемой, а место ее появления – непредсказуемым.

В статье оспаривается доминирующая ныне позиция, согласно которой шва в современном армянском языке обладает признаками фонемы и ее нужно исследовать как таковую. Поверхностное явление звука шва объясняется правилами редукции и эпентезы. Три существенных факта указывают на статус шва в фонологических структурах. Во-первых, в армянском лексиконе не существует ни одного корня, содержащего шва-сегмент; во-вторых, в определенной звуковой среде шва является фонетическим следствием имплицитного конфликта между артикуляторными (дорсум/корень языка) целями; в-третьих, место появления звука шва вполне предсказуемо; оно определяется правилами слогораздела.

HASMIK HOVHANNISYAN – *The Status of Schwa/Ը in Modern Armenian.* – Armenian orthographic system is basically phonemic with a legitimate schwa grapheme in the alphabet. There are a number of words in the native lexicon with the schwa letter Ը, e.g. Ծնկ ‘friend’, Ծուր ‘exquisite’, Ծմբռնել ‘grasp’, etc., where the orthography, according to traditional approaches, directly represents underlying forms. Yet no schwa is employed in the spelling of consonant clusters. A question arises: whether the schwa is always present in underlying representations (as in the words mentioned above) and is underdetermined by orthographic rules (as in case of consonant clusters) or it has a variable behaviour. In traditional Armenian linguistic approaches the schwa has been granted a ‘special’ phonemic status and the occurrence of the schwa has implicitly been claimed to be “unpredictable” or “variable”.

This article argues that the schwa in Armenian is best analyzed as a non-phonemic vowel. The surface occurrence of the schwa is accounted for by epenthesis and reduction rules. Three crucial facts bear directly on the status of the schwa in phonological representations: 1) there are no word/morpheme-initial (underlying) schwas in the roots of the lexicon as has been claimed in existing linguistic analyses, 2) in certain segmental contexts the schwa is a phonetic result of intrinsic conflict between articulatory (tongue dorsum/root) targets, 3) the site of the schwa is quite predictable and is clearly determined by syllabification rules. Once the Universal Grammar and Armenian-specific syllabification rules have been considered, the schwa- placement strategy can be articulately accounted for.